

ՄԱՂԱՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

ՄԱՂԱՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

1

- Մաղաքիայի “միջոցով հսրայէլի **տրուած**՝ *Տէրոց պատգամը*.—
- 2 «Ես ձեզ սիրեցի,— կը պատգամէ *Տէրը*,—
Սակայն դուք կ’ըսէք. “Մեզ ի՞նչպէս սիրեցիր□:
Միթէ Եսաւ Յակոբի Եղբայրը չէ՞ր,— կը յայտարարէ *Տէրը*.—
Յակոբը սիրեցի,
- 3 Իսկ Եսաւը ատեցի,
Անոր լեռները “ամայութեան վերածեցի”,
Եւ անոր ժառանգութիւնը անապատի շնագայլերուն **յանձնեցի**:
- 4 Եթէ Եղովմ ըսէ. “Կործանեցանք,
Բայց աւերակները պիտի վերակառուցանենք□,
Զօրքերու *Տէրը* սա՛ կը յայտարարէ.
“Թող անոնք կառուցանեն, բայց ես պիտի փլցնեմ.
Անոնք պիտի կոչուին. “Ամբարշտութեան հողամաս”,
Նաեւ. “Ժողովուրդ՝ որու դէմ *Տէրը* յակիտեան սրտմտութեամբ **լեցուած** է”□:
- 5 Չեր աչքերը պիտի տեսնեն, ու պիտի ըսէք.
“Տէրը թող մեծնայ հսրայէլի ՚հողամասէն անդին’□»:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԹԱՆԴԻՄԱՆԷ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

- 6 «Որդին **իր** հայրը կը պատուէ,
Ծառան՝ իր տէրը:
Ուրեմն Եթէ ես հայր եմ, ո՞ւր է իմ պատիւս.
Եթէ տէր եմ, ո՞ւր է իմ երկիւլս,—
Կը յայտարարէ զօրքերու *Տէրը* ձեզի՝
Ո՞վ քահանաներ, որ իմ անունս կ’արհամարհէք,
Եւ կ’ըսէք. “Ձու անունդ ի՞նչպէս արհամարհեցինք□:-
- 7 Իմ զոհասեղանիս վրայ պիղծ հաց կը մատուցանէք,
Ու կ’ըսէք. “Ձեզ ի՞նչպէս պղծեցինք□:
— “Տէրոց սեղանը արհամարհելի է□ ըսելով:
- 8 Երբ կոյր **անասունը** իբր զոհ կը մատուցանէք, միթէ չարութիւն չէ՞.
Երբ կաղը կամ հիւանդը կը մատուցանէք, միթէ չարութիւն չէ՞:
Եթէ զայն ՚ընծայես քու կուսակալիդ,

^ա **Եբր.**՝ ձեռքով

^բ **Եբր.**՝ Եհովայի

^գ **Եբր.**՝ ամայութիւն ըրի

^դ **Եբր.**՝ Թշուառացանք

^ե Կամ՝ հողամասին վրայ

^գ **Եբր.**՝ մատուցանես

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Միթէ քեզի պիտի հաւանի՞,

Կամ էքեզ սիրով պիտի ընդունի՞ «», կը յայտարարէ գօրքերու Տէրը:

9 (Ուրեմն հիմա պաղատեցէք Աստուծոյ,

Որպէսզի մեզի ողորմի.

Ասիկա ձեր ձեռքով եղաւ:)

«Միթէ ձեզ սիրով պիտի ընդունի՞,— կը յայտարարէ գօրքերու Տէրը:—

10 Նոյնիսկ ձեր մէջ ո՞վ դոները ձրի կը գոցէ.

Իմ զոհասեղանիս կրակն ալ ձրի չէք վառեր:

Զեզի չեմ հաճիր,— կը յայտարարէ գօրքերու Տէրը,—

Ու ձեր ձեռքէն ընծայ չեմ՝ ընդունիր:

11 Արդարեւ արեւելքէն մինչեւ արեւմուտք՝

‘Ազգերուն մէջ իմ անունս մեծ պիտի ըլլայ.

Ամէն տեղ իմ անունիս

Խունկ եւ մաքուր ընծայ պիտի մատուցանուի,

Որովհետեւ իմ անունս ազգերուն մէջ մեծ պիտի ըլլայ,— կը յայտարարէ գօրքերու Տէրը:—

12 Բայց դուք զայն կը պղծէք՝

Ըսելով. “Տէրոց սեղանը պիղծ է,

Ու անոր ՚բերած կերակուրը՝ արհամարհելի:

13 Նաեւ կ’ըսէք. “Այս ի՞նչ տաժանք է□,

Եւ անոր վրայ կը փշէք,— կը յայտարարէ գօրքերու Տէրը:—

Յափշտակուածը, կաղն ու հիւանդը կը բերէք,

Այդպէս ընծայ կը բերէք.

Միթէ զանոնք ձեր ձեռքէն պիտի ընդունի՞մ,— կը յայտարարէ Տէրը:—

14 Թող անիծեալ ըլլայ այն նենգ մարդ,

Որ իր հօտին մէջ անարատ արու մը ունենալով՝ ուխտ կ’ընէ,

Բայց ՚արատաւորը Տէրոց կը մատուցանէ ՚եր՝ զոհ.

Որովհետեւ ես մեծ թագաւոր եմ,— կը յայտարարէ գօրքերու Տէրը,—

Եւ իմ անունս ահաւոր է ազգերուն մէջ»:

2

«Հիմա սա՛ պատուէրը ձեզի է, ո՞վ քահանաներ.—

2 Եթէ մտիկ չընէք,

^է Եր.՝ քու երեսդ պիտի բարձրացնէ՞

^զ Եր.՝ երեսին պաղատեցէք

^ը Եր.՝ հաւանիր

^ժ Կամ Հեթանոսներուն

^ի Եր.՝ պտուղը՝ այսինքն

^լ Եր.՝ հաւանի՞մ

^{իւ} Եր.՝ ապականածը

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԵՐԻԹԻՒՆԸ

Եթէ աշխածէք

Իմ անունիս փառք տալ, – կը յայտարարէ գօրքերու Տէրը, –

Զեզի անէծք պիտի ղրկեմ,

Ու ձեր օրհնութիւնները պիտի անիծեմ:

Այո՛, զանոնք արդէն անիծած եմ,

Քանի որ դուք չեք մտածեր:

3 Ահա՛ ես ձեր զարմը պիտի սաստեմ.

Ձեր երեսին վրայ թրիք պիտի ցանեմ,

Ձեր տօներուն **զոհերուն** թրիքը,

Որ ձեզ անոր հետ տանին:

4 Այս ատեն պիտի գիտնաք թէ ե՞ս ձեզի ղրկեցի այս պատուէրը,

Որպէսզի իմ ուխտս Դեւիի հետ գոյատեւէ, – կը յայտարարէ գօրքերու Տէրը: –

5 Իրեն հետ կճած ուխտս կեանքի ու խաղաղութեան համար էր.

Զանոնք իրեն տուի այն երկիւղին **փոխարէն՝**

Որով ինձմէ կը վախնար

Եւ իմ՝ անունէս կը զարհուրէր:

6 Ճշմարտութեան օրէնքը անոր բերանին մէջ էր,

Ու անոր շրթունքին վրայ անիրաւութիւն չգտնուեցաւ.

Ինծի հետ խաղաղութեամբ եւ ուղղամտութեամբ կ'ընթանար,

Ու շատերը անօրէնութենէ՝ հեռացուց:

7 Արդարեւ քահանային շրթունքը **Աստուծոյ** ճանաչումը պահելու է,

Մարդիկ անոր բերանէն օրէնքը փնտռելու են,

Քանի որ ան գօրքերու Տէրոց պատգամաւորն է:

8 Բայց դուք ճամբայէն շեղեցաք.

Շատերը օրէնքին պատճառով գայթակղեցուցիք,

Դեւիի ուխտը ապականեցիք. – կը յայտարարէ գօրքերու Տէրը: –

9 Ուստի ես ալ ձեզ ամբողջ ժողովուրդին առջեւ արհամարհեցի ու նուաստացուցի,

Քանի որ դուք իմ ճամբաներս չպահեցիք,

Եւ օրէնքին **կիրարկումին** մէջ աշառութիւն ըրիք»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՆՀԱՍԱՐՍՈՒԹԻՒՆԸ

10 Միթէ բոլորս մէկ հայր չունի՞նք,

Միթէ մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ.

Ինչո՞ւ իրարու հանդէպ անհաւատարիմ ենք՝

Մեր հայրերուն ուխտը դրժելով:

11 Յուղա անհաւատարիմ եղաւ,

Իսրայէլի մէջ ու Երուսաղէմի մէջ գարշութիւն գործուեցաւ.

Որովհետեւ Յուղա պղծեց Տէրոց սիրած՝ սրբարանը՝

^ա Եբր.՝ ձեր սիրտին մէջ չդնէք

^բ Եբր.՝ անունիս առջեւ

^գ Կամ՝ վերադարձուց

^դ Կամ՝ սրբութիւնը

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ամուսնանալով օտար աստուծոյ մը աղջիկին հետ:

12 Տէրը թակորի վրաններէն պիտի բնացնջէ ասիկա ընող մարդը,
“Արթուն եղողն ու պատասխանողը”;

Եւ գօրքերու Տէրոջ ընծայ մատուցանողը:

13 “Դարձեալ՝ սա՝ կ’ընէք..”

Տէրոջ զոհասեղանը արցունքներով,

Լացով ու հեծեծանքով կը ծածկէք,

Հորովհետեւ ան ալ բուշադրութիւն չի դարձներ ընծային,

Որ զայն ծեր ձեռքէն բարեհաճութեամբ ընդունի:

14 Ուստի կ’ըսէք. “Ի՞նչո՞ւ”:

— Քանի որ Տէրը վկայ է քու եւ երիտասարդութեանդ կնոց միջեւ,

Որուն անհաւատարիմ եղար,

Թէպէտ ան ընկերակցուհիդ եւ ուխտիդ կինն էր:

15 Միթէ Աստուած մէկ մարմին չըրա՞ւ ա՛ն՝ որ Հոգիին մնացորդը ունէր.

Եւ ինչո՞ւ մէկ..— որ բինտուէ Աստուծոյ զարմը:

Ուրեմն ուշադիր եղէք ծեր հոգիին.

Ո՛չ մէկը թող անհաւատարիմ ըլլայ իր երիտասարդութեան կնոց:

16 Արդարեւ Տէրը՝ հսրայէլի Աստուածը կը յայտարարէ թէ

Ինք կ’ատէ կին արձակելը.

«Ասիկա իր հանդերձով բռնութիւնը ծածկել է», կը յայտարարէ գօրքերու Տէրը:

Ուստի ուշադիր եղէք ծեր հոգիին, եւ անհաւատարիմ մի՛ ըլլաք:

ԴԱՏԱԱՏԱՆԻՆ ՕՐԸ ՄՈՏԱԼՈՒՏ Է

17 Զեր խօսքերով Տէրը ծանձրացուցիք,

Բայց դուք կ’ըսէք. “Ի՞նչպէս ծանձրացուցինք”:

— Երբ կ’ըսէք. “Ամէն չարիք ընող՝

Տէրոջ աչքերուն բարի է,

Եւ ինք անոնց կը հաճի”.

Կամ. “Ո՞ւր է հարդարութեան Աստուածը”:

3

«Ահա՝ ես իմ պատգամաւորս կը դրկեմ,

^բ Կամ՝ Ուսուցիչն ու աշակերտը

^գ Եբր.՝ Երկրորդ

^է Կամ՝ Այնպէս որ

^թ Եբր.՝ Երես

^թ Կամ՝ ուզէ

^ժ Եբր.՝ յոգնեցուցիք

^ի Եբր.՝ իրաւունքի

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒԾ

Եւ իմ առջեւս ճամբայ պիտի պատրաստէ:

Զեր փնտուած Տէրը, այսինքն Ուխտին հրեշտակը՝ որուն կը բաղձաք,
Յանկարծ իր տաճարը պիտի գայ.

Ահա՝ կու գայ», կը յայտարարէ զօրքերու Տէրը:

2 **Ո՞վ պիտի կարենայ** տոկալ անոր գալուստին օրը,

Ո՞վ պիտի գոյատեւէ երբ ան երեւնայ.

Որովհետեւ զտողին կրակին պէս պիտի ըլլայ,

Ու թափիչներուն օճառին պէս:

3 **Ան պիտի բազմի իբր** արծաթ զտող եւ մաքրող,

Եւ Դեւիի որդիները պիտի մաքրէ.

Զանոնք ուսկիի ու արծաթի պէս պիտի զտէ,

Եւ անոնք արդարութեամբ Տէրոց ընծայ պիտի մատուցանեն.

4 **Այն ատեն թուղայի** ու Երուսաղէմի ընծան

Տէրոց հաճելի պիտի ըլլայ՝

Հին օրերուն պէս ու վաղեմի տարիներուն պէս:

5 «Դատաստանի համար ձեզի պիտի մօտենամ,

Եւ շտապելով վկայ պիտի ըլլամ կախարդներուն ու շնացողներուն,

Դուստ երդում ընողներուն,

Վարձկանին վարձքը չվճարողներուն,

Այրին ու որբը հարստահարողներուն,

Գաղթականին **իրաւունքը** ծռողներուն,

Ինձմէ չվախցողներուն դէմ», կը յայտարարէ զօրքերու Տէրը:

ՏԱՍՏԱՆՈՐԴԻՆ ՎՃԱՐՈՒԾ

6 «Արդարեւ ես ԵՇԻՎԱՆ եմ, չեմ փոխուիր,

Իսկ դուք չէք Պատրիր Յակոբի որդիներ ըլլալէ:

7 Զեր հայրերուն օրերէն ի վեր

Իմ կանոններէս շեղեցաք ու **զանոնք** չպահեցիք:

Վերադարձք ինծի, ես ալ ձեզի պիտի վերադառնամ,— կը յայտարարէ զօրքերու
Տէրը:—

Սակայն դուք կ'ըսէք. “Ի՞նչպէս վերադառնանք”:

8 — Միթէ մարդ Աստուած կը կողոպտէ՞.

Սակայն դուք զիս կողոպտեցիք,

Ու կ'ըսէք. “Քեզմէ ի՞նչ կողոպտեցինք”.

— Տասանորդներ եւ բարձրացնելիք ընծաներ:

ա **Եբր.**՝ պարունակել

բ **Այսինքն**՝ լուացարարներուն

գ **Եբր.**՝ Հնադարեան

դ **Կամ**՝ Կեղծ

ե **Այսինքն**՝ ԱՇ՝ որ է, **Կամ**՝ Յակիտենականը

գ **Եբր.**՝ սպառիր

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- 9 Դուք անէծքով՝ պատժուած էք,
Որովհետեւ կողոպտեցիք զիս՝ ամբողջ ազգով:
10 Գանձատունը բերէք բոլոր տասանորդները,
Որպէսզի իմ տանս մէջ բկերակուր ըլլայ:
Ուրեմն փորձարկեցէ՛ք զիս ասով,— կը յայտարարէ գօրքերու *Տէրը*,—
թէ արդեօք ձեզի պիտի չբանա՞մ երկինքի բահանադռները
Ու ձեր վրայ օրհնութիւն թափեմ,
Այնքան շատ՝ որ բաւական տեղ չըլլայ:
11 Հափող միջատը պիտի սաստեմ ձեր *սիրոյց* համար,
Որ ձեր գետինին պտուղը չփացնէ
Ու ձեր դաշտին մէջ որթատունկը ճանպտուղ չըլլայ,— կը յայտարարէ գօրքերու
Տէրը:—
12 Բոլոր ազգերը երանելի պիտի կոչեն ձեզ,
Քանի որ դուք բաղձալի երկիր պիտի ըլլաք», կը յայտարարէ գօրքերու *Տէրը*:

ԱՍՏՈՒԱԾ ՆԵՐՈՒՄ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ

- 13 «Զեր խօսքերը ինծի դէմ խիստ եղան,— կը յայտարարէ *Տէրը*.—
Բայց դուք կ'ըսէք. “Զեզի դէմ ի՞նչ խօսեցանք»:
14 Դուք ըսիք. “Ընդունայն է Աստուած պաշտելը.
Ի՞նչ շահ կայ անոր հրահանգը պահելէն
Ու գօրքերու *Տէրոց* առջեւ սուգով ընթանալէն:
15 Հիմա մենք հպարտները երանելի կը կոչենք.
Ամբարշտութիւն գործող ներն անգամ՝ բարգաւաճ են,
Նոյնիսկ Աստուած կը փորձեն եւ կ'ազատինք»:
16 Այն ատեն *Տէրոցմէ* վախցողները
Իրարու հետ խօսեցան,
Տէրն ալ ուշադիր եղաւ ու լսեց,
Եւ իր առջեւ յիշատակի գիրք գրուեցաւ՝
Տէրոցմէ վախցողներուն համար,
Անոր անունին մասին մտածողներուն համար:
17 «Անոնք իմս պիտի ըլլան,— կը յայտարարէ գօրքերու *Տէրը*,—
Այն օրը երբ սեփական *ժողովուրդս* հաւաքեմ.
Անոնց պիտի խնայեմ,
Ինչպէս մարդ մը կը խնայէ իր որդիին՝
Որ իրեն կը ծառայէ:
18 Այն ատեն դարձեալ պիտի նկատէք *տարբերութիւնը*

^է *Եբր.*՝ անհծուած

^բ *Եբր.*՝ որս

^բ *Կամ* պատուհանները

^Ժ *Եբր.*՝ պտուղներէ գրկուած

^ի *Եբր.*՝ կառուցանուած

ՄԱՂԱՅԻՍԹԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Արդարին եւ ամբարիշտին,
“Աստուծոյ ծառայողին”
Եւ անոր չծառայողին»:

ՏԵՐՈՉ ԳԱԼՈՒՍԻՆ ՕՐԸ

4

- «Արդարեւ ահա՝ կու գայ օրը՝ փուռի պէս կիզիչ,
Երբ բոլոր հպարտներն ու բոլոր ամբարշտութիւն գործողները
Խոզանի պէս պիտի ըլլան.
Եկող օրը զանոնք պիտի բոցավառէ, – կը յայտարարէ զօրքերու Տէրը, –
Այնպէս որ անոնց արմատ կամ ոստ պիտի չթողու:
- 2 Բայց ձեզի՝ իմ անունէս վախցողներուդ՝
Արդարութեան արեւը պիտի ծագի,
Եւ անոր թեւերուն վրայ բուժում պիտի ըլլայ:
Դուք դուրս պիտի ելլէք ու “ցրուիք՝
բգոմէն արծակուած” հորթերու պէս,
- 3 Եւ ամբարիշտները պիտի կոխկոտէք,
Որովհետեւ անոնք մոխիրի պէս պիտի ըլլան
Զեր ոտքերուն ներբաններուն տակ,
Այն օրը՝ որ կը պատրաստեմ», կը յայտարարէ զօրքերու Տէրը:
- 4 «Յիշեցէք իմ ծառայիս՝ Մովսէսի Օրէնքը,
Այսինքն այն կանոններն ու դատավճիռները՝
Որ անոր հրամայեցի Ջորեբի մէջ, ամբողջ հսրայէլի համար:
- 5 Ահա՝ ես Եղիա մարգարէն պիտի դրկեմ ձեզի՝
Տէրոջ մեծ եւ ահաւոր օրը գալէն առաջ:
6 Ան հայրերուն սիրտը պիտի վերադարձնէ դէպի որդիները,
Եւ որդիներուն սիրտը՝ դէպի հայրերը,
Որպէսզի չգամ ու երկիրը նզովքով չզարնեմ»:

1 Երր.՝ տեսնէք

Խ Այսինքն՝ Աստուած պաշտողին

ա Կամ՝ տարածուիք

բ Կամ՝ Գիրցուած